Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

63/4159/ 6 ապրիլի 2012 ուրբաթ

I SSN 1829-2224
9 771829 222003 12051

Ա

## Ինչը կստիպի փոխվել

Անցած շաբաթ Հայաստան եկած մի շարք եվրոպացի արտգործնախարարներ այս կամ այն չափով անդրադարձան առաջիկա խորհրդարանական ընտրություններին եւ դրական գնահատեցին մեր երկրում ստեղծված նախընտրական մթնոլորտը: Ընդհանուր առմամբ նույն ոգով արտահայտվեց նաեւ ԱՄՆ դեսպանը: Կարելի է, իհարկե, ասել, որ մեր իշխանություններին հաջողվել է նրանց խաբել, կամ՝ որ նրանք առաջնորդվում են իրենց երկրների շահերով եւ ցանկանում են «խաբված լինել»՝ գուցե այդ երկու պնդումների մեջ ճշմարտության հատիկ կա: Սակայն, անկախ մեր իշխանությունների խորամանկության աստիճանից, նրանց ձգտումը՝ անցկացնել խաղաղ, առանց միջադեպերի ընտրություններ, նկատելի է, ու հենց դա է, հավանաբար, արձանագրում Արեւմուտքը: Բնականաբար, այն մարդիկ, որոնք հետեւում են մեր ներքաղաքական գործընթացներին, այնքան միամիտ չեն, որ հավատան, թե ընտրությունները կանցնեն առանց խախտումների («գլխավոր զենքն» այստեղ, ըստ ամենայնի, լինելու է ընտրակաշառք բաժանելը եւ ցուցակների հետ կապված ձեռնածությունները): Արձանագրենք նաեւ, որ իշխանական ճամբարից առայժմ չեն հնչում նաեւ «կլիզմա», «մուսկա», «բառաչող կովեր», «քաղաքական դաշտի թափոններ» եւ այլ՝ նման ոճի արտահայտություններ, ինչը նույնպես բարենպաստ է անդրադառնում ընդհանուր մթնոլորտի վրա:

Ի՞նչ կարող է տալ մեզ նման ընթացքը, եթե այն, բոլոր քաղաքական ուժերի խոհեմության շնորհիվ, շարունակվի: Նախեւառաջ՝ դա Հայաստանին եվրոպական ինտեգրման առումով շատ լայն հնարավորություններ կտա, ինչի մասին ուղղակիորեն խոսում էին մեր երկիր եկած հյուրերը: Ինձ թվում է, որ «Եվրանեսթի» արտագնա նիստից հետո եվրոպացիների համար է՛լ ավելի ցայտուն դարձավ մեր ու հարեւան պետության քաղաքական ռեժիմների տարբերությունը, եւ նրանց մոտեցումը երկու երկրներին այլեւս դժվար թե լինի համահարթեցված, պարիտետային: Հետեւաբար, քիչ թե շատ նորմալ ընտրությունների անցկացումը, կարելի է առանց չափազանցության ասել՝ ազգային անվտանգության խնդիր է:

Երկրորդ հանգամանքն այն է, որ բարեփոխումները Հայաստանի նման երկրում հնարավոր է անցկացնել միայն վերեւից՝ բարձրագույն ղեկավարության կամային որոշումներով: Դա ցավալի փաստ է, բայց հույս դնել, որ «թալանչինե՛ր, ավազակնե՛ր, հեռացե՛ք» գոռալու արդյունքում իշխանությունները կհեռանան եւ իրենց տեղը կզիջեն գոռացողներին, միամտություն է: Մյուս կողմից՝ պարզ է, որ որեւէ դրական փոփոխություն իշխանությունները կկատարեն միայն հասարակության խաղաղ ճնշմամբ՝ այն դեպքում, եթե առաջ են քաշվել հասարակությանն իսկապես համախմբող գաղափարներ, ինչպիսին էր, օրինակ, քաղբանտարկյալների ազատ արձակումը: Ճնշումը ներքեւից պետք է զուգակցվի դրսի ճնշմամբ: Ենթադրում եմ, որ իշխանությունները Երեւան եկող հյուրերին այդ առումով խոստումներ են տալիս: Դա դրական երեւույթ է՝ անկախ նրանից, թե խոստումների որ մասն է կյանքի կոչվելու:

Այդ երկու ճնշումներն էլ պետք է լինեն որոշակի սահմաններում, որպեսզի երկրում քաոս չստեղծվի: Ամեն ինչ, ինչպես ասում են, չափի մեջ է գեղեցիկ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Կուսակցությունները Զատիկի ձվեր են բաժանել



«Հեռուստատեսությամբ ամբողջ օրը ռեկլամի նման գնում է՝ 1000-2000 դրամանոց ակնոց բաժանեցին, մուրաբաներ: Երեկ լսել եմ, որ Զատիկին ընդառաջ՝ ձվեր են բաժանել: Դա պարզ է մեզ համար, որ բարեգործության հետ աղերս չունեցող երեւույթներ են, եւ շատ տհաճ է»,- երեկ Aravot.am-ի հետ զրույցում նշեց «Ժառանգության» պատգամավոր Արմեն Մարտիրոսյանը: Ըստ նրա՝ նման բարեգործություններ անում են կոալիցիոն բոլոր կուսակցությունները՝ խախտելով օրենքը: Մեր հարցին ի պատասխան՝ «Ժառանգությունը» չի՞ անում բարեգործություն առհասարակ՝ պարոն Մարտիրոսյանը վստահեցրեց՝ ոչ. «Մենք չենք անում, որովհետեւ կուսակցությունը բարեգործական կազմակերպություն չէ, քաղաքական մարմին է, որը մի գործառույթ իրականացնելու իրավունք ունի՝ դա քաղաքական գործունեությունն է: «Ժառանգության» անհատները բարեգործություններ անում են, բայց դուք երբեւիցե դրա մասին չեք լսել ու չեք լսելու, որովհետեւ ինչպես Ավետարանն է ասում՝ աջ ձեռքդ չպետք է իմանա՝ ձախն ինչ է անում: Այդպես ենք մենք բարեգործություն անում»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Հրազդանի սխեմայով ընտրությունները մի քանի քայլ են առաջ

Բլոգեր Տիգրան Քոչարյանը, որը նաեւ ակտիվ է Facebook սոցցանցում, «Առավոտի» հետ զրույցում կարծիք հայտնեց, թե՝ Աժ առաջիկա ընտրությունները լինելու են Հրազդանի նման ընտրություններ՝ առանց բռնի ուժի կիրառման: Մեր հարցին, թե՝ դա բավարարո՞ւմ է մեզ՝ քաղաքացիներիս, արձագանքեց. «Եթե ռադիկալ հայացքով նայենք՝ ոչ, չի բավարարում: Բայց եթե էվոլյուցիոն գործընթացների համատեքստում նայենք՝ բավարարում է: Դա կարող է լինել ոչ թե դիտորդների ասելով՝ «մեկ քայլ առաջ», այլ բավականին մեծ քայլերով առաջընթաց, որովհետեւ երբ մարդիկ մի ամբողջ 20 տարի մշակույթ են ձեւավորել բռնի ուժով, առնելով, ծեծելով, լցոնումներով ընտրություններ անցկացրել, ապա Հրազդանը, իսկապես, մի քանի քայլ առաջ է: Հիմա ես մարդիկ գիտեմ, ովքեր շոկի մեջ են, չգիտեն՝ ի՞նչ անել, որովհետեւ նախկինում հենց այդ մեթոդներով են ընտրություններ արել: Այդ մարդիկ, այդ մեթոդներն արդեն վերանում են»:

Կարդացեք էջ 3:

### ԲՀԿ-ն խոստանում է անտոկոս վարկեր գյուղացիներին

Առաջիկա հինգ տարիներին ԲՀԿ-ն ձգտելու է հասնել յուրաքանչյուր տարվա պետբյուջեի ծախսային մասի առնվազն 0,5-1 տոկոսի չափով պետության կողմից գյուղացիական տնտեսություններին էժան, առանձին ծրագրերի շրջանակներում՝ նաեւ անտոկոս, վարկերի տրամադրմանը եւ դրանց տոկոսադրույքների սուբսիդավորմանը: Սա ԲՀԿ նախընտրական խոստումներից մեկն է՝ «Հավատա, վստահիր. պահանջիր» կարգախոսի ներքո: Թե որքանո՞վ կհավատա ու կվստահի հանրությունը ԲՀԿ-ին՝ պարզ կլինի արդեն մայիսի 7-ին:

Կարդացեք էջ**D**3:

Այսուհետեւ թերթի 8-րդ էջում կարող եք կարդալ օրվա հումորը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11-ին, «Հայելի» ակումբի հյուրն է Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը:

### Եղանակ

Երեւան +5 +20, Շիրակ -3 +11, Կոտայք -3 +11, Գեղարքունիք -3 +11, Լոռի 0 +19, Տավուշ +2 +21, Արագածոտն լեռներ -3 +11, Արագածոտն նախալեռն. +3 +19, Արարատ +4 +20, Արմավիր +4 +20, Վայոց Ձոր լեռներ -3 +11, Վայոց Ձոր նախալեռն. -4 +20, Սյունիքի հովիտներ +5 +23, Սյունիքի նախալեռներ +2 +17

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Մեր ոգեղեն ձուկը



Թվում էր, թե օրերից մի օր վերջապես ամեն ինչ այստեղ տիտի սկսվեր, եւ թվում էր նաեւ, թե այնուհետեւ ամեն ինչ սկսվել էր շատ ավելի առաջ, երբ մենք չէինք ծնվել առհասարակ եւ կարծես թե հասկացանք հետո, երբ մենք արդեն հայտնվել էինք, եւ շարունակում է թվալ, երբ արդեն մեր զավակներն էին ծնվել, որ անելու էին այն, ինչ մենք չէինք հասցրել անել: Եվ հիմա թվացյալ, բնականաբար անհասկանալի ու զարմանալիորեն մենք մեր զավակների հայրն ենք. դժվար ենք ապրում մեր տանը, սակայն ապրում ենք...

Այո, թվում էր, թե ամենադժվարը առաջին օրն էր: Պարզվեց հետո, որ ծնունդից-կյանք եւ այնու ճանապարհին ամենադժվարը ապրելն էր: Այսինքն թե՝ պարզվեց, որ տառապագինը ամեն օրդ ապրելն է: Եվ թող ոչ ոքի չթվա, որ մեր ծնունդն ու ապրած կյանքը եւ ապրելիքը խաղ է միայն...

Խաղ չէ նաեւ ոչ ձկան համաստեղությունը եւ ոչ էլ ձկան ամիսը: Եվ քանի որ խաղ չէ, ո՞վ էր մեզանից մեկը, թերեւս միակը՝ Արարատի քուրմը, ում վճիտ ավազանում ընդամենը կարմիր պուտերով մի ձուկ էր լողում, որին ժամանակներում տեսնելով՝ զարմացավ Ալեքսանդր Մեծը եւ հասկացավ, որ Աստված միակն է, եւ ինքն ինչքան էլ մեծ՝ ընդամենը մահկանացու է:

Եվ այսու մենք տիտի որ հասկանանք, որ անզոր ենք ժամանակների առաջ եւ պետական, իշխանական ինչպիսի դիրքում էլ լինենք պիտի ընդունենք, որ ինչ որ այսօր մենք ունենք, մեզանից առաջ վաղուց արդեն շատերը ունեցել են եւ ծածկվել են ժամանակի մոռացության փոշիով: Մնալու է միայն գործը, ինչ թողեցիր դու քո երկրին... Ինչպես նաեւ մնալու է ձուկը՝ իր համաստեղությունից եկած, որը, սակայն, շուտով դանդաղ հեռանալու է մեզանից՝ մեզ թողնելով իր լուսավոր ջուրը կենդանի:

Այնինչ, ձուկն այսօր շարունակում է ապրել մեր շուրջը, մեր կողքին եւ ամենակարեւորը՝ մեր մեջ, սակայն չկա Արարատի մեծ քուրմը եւ Ալեքսանդր Մեծը ու նրա ստեղծած կայսրությունը մինչեւ Հնդկաստան. մնացել է փոքրիկ, կարծում եմ՝ Աստծուն հաճո մի երկիր՝ անունով Հայաստան, որտեղ դեռեւս ապրում է ձուկը կենդանի, եւ մի երկիր, որ աշխարհին տվեց այն, ինչ ինքը ստեղծեց, տվեց ամեն ինչ եւ մնաց մենակ...

Սակայն մի՛ վախեցիր, ձուկ ջան, դու մենակ չես, եւ ոչ մի ձկնորս քեզ այլեւս չի կարող որսալ, քանզի դու լողում ես մեր ոգու հազարամյա ջրերում, իսկ մեր ոգին անորսալի է այլեւս:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# ՀՀԿ-ն պատրաստվում է միաժամանակյա խաղի սեանսի

«Մենք հանգիստ ենք վերաբերվում 3+1 ձեւաչափին», - Aravot.am-ին ասաց ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը՝ մեկնաբանելով Ընտրությունների հանրային վերահսկողության միասնական շտաբ ձեւավորելու մասին փաստաթղթին քաղաքական 4 ուժերի՝ ՀԱԿ-ի, ՀՅԴ-ի, «Ժառանգության» եւ ԲՀԿ-ի միանալուն:

Նա նշեց. «Իրականում շատ մակերեսային է այն ընկալումը, թե այդ 4 քաղաքական ուժերը դաշնակիցներ են եւ տեսնում են մեկ մրցակից՝ ի դեմս ՀՀԿ-ի: Խորքային վերլուծության մեջ, ինչպես կասեր նախկին ԱԳ նախարարը, քաղաքագիտական տեսակետից՝ հենց այդ 4 կուսակցություններն են իրական մրցակիցները: Բացատրեմ ինչու. Հայաստանում ընդդիմադիր ընտրազանգվածը ավանդաբար ձեւավորվել է ազգաբնակչության 1/3-ի չափով: Եվ ընդդիմադիր կեցվածք որդեգրած կամ որդեգրող քաղաքական 4 ուժերը իրականում պայքարելու են իրար դեմ՝ այդ 1/3-րդ ձայները համապատասխան բաշխման ենթարկելու համար: Մնացյալ երեք կուսակցությունների համար առանց այդ էլ՝ ի սկզբանե նեղ ընտրազանգվածային դաշտը բաժանելու խնդիր կա: Եվ իրական մրցակիցները խորքային քաղաքական գործընթացներում հենց երեկվա միջոցառումը կազմակերպած քաղաքական ուժերն են»:

Արմեն Աշոտյանն ասաց, որ չի ցանկանում այս համատեքստում հանգամանալից անդրադառնալ կոալիցիոն կուսակցության՝ ԲՀԿ-ի նախընտրական ռազմավարությանը. «Սա առանձին մեկնաբանության կարժանանա ընտրարշավի ժամանակ»: Իսկ առայժմ միայն նշեց. «ԲՀԿ-ի կողմից Վարդան Օսկանյանի առաջարկած փաստացի քարոզչական ուղղությունը՝ խաղալ ընդդիմության, իրականում, կարծում եմ, գործելու է իրենց էլեկտորալ հնարավորությունների դեմ, քանի որ այդ դեպքում ամբողջությամբ ՀՀԿ-ին են հանձնվում իշխանամետ կամ կենտրոնամետ ընտրազանգվածի ձայները»:



Ի դեպ, անդրադարձավ նաեւ Օսկանյանի այսօր հրապարակած հետեւյալ պարզաբանմանը. «Յուրաքանչյուր ընտրության ժամանակ միշտ նույնն եմ ասել՝ ցավալի է, որ ընտրախախտումների հետեւանքով ժողովրդի մոտ կասկածներ կան ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Հիմա էլ ասում եմ նույն բանը՝ ամեն ինչ պետք է անել, որպեսզի ժողովրդի մոտ կասկածներ չլինեն ընտրությունների օրինականության վերաբերյալ»: ՀՀԿ փոխնախագահը նշեց. «Ազատ, արդար եւ արժանահավատ արդյունքներով ընտրությունների անցկացումը պետության գերակայությունն է՝ բազմիցս բարձրաձայնած երկրի նախագահի կողմից: Քաղաքական դաշտի որոշ հատվածներից հնչող կոչերը՝ նման ընտրություններ անցկացնելու վերաբերյալ, ինձ սկսում են հիշեցնել միջնադարից եկած մի երեւույթ, երբ ամենաբարձր գոռացողները «բռնիր գողին», հաճախ լինում էին հենց իրենք՝ գողերը»:

Արմեն Աշոտյանը նաեւ պնդեց, որ ընդդիմադիր կուսակցությունները, որոնք իրենց միակ մրցակից են համարում ՀՀԿ-ին՝ «իրականում այսօր կախված են Հանրապետական կուսակցության քաղաքական դիրքորոշումից՝ ՀՀԿ-ի կողմից իրենց գլխավոր կամ «սիրելի» մրցակից ճանաչելուց: Ըստ այդմ՝ կուսակցությունները, որոնք հավակնում են ՀՀԿ-ին դարձնել նախընտրական հակաքարոզչության թիրախ, այսօր շատ ավելի են կախված Հանրապետականից, որպեսզի մեր կուսակցության կողմից «ճանաչվեն» ընդդիմության պարագլուխ, ու նաեւ կարողանան ըստ այդմ խաղարկել քարոզչական այդ սխեման»:

Մեր հարցին, թե ՀՀԿ-ն այսուհանդերձ ո՞ւմ է հակված ճանաչել իբրեւ գլխավոր մրցակից՝ ՀԱԿ-ի՞ն, ԲՀԿ-ի՞ն, թե՞ որեւէ այլ ուժի, նա պատասխանեց. «Իրական քաղաքական եւ քաղաքագիտական այսօրվա ներուժով ՀՀԿ-ի հետ շախմատ խաղալու համար չկա քաղաքական միեւնույն խաղատախտակի մոտեցող որեւէ քաղաքական ուժ: Մեր քարոզչությունը բավարարելու է սեփական ծրագրերն իրականացնելուն, իսկ հարկ եղած դեպքում՝ նաեւ սեւ PR-ին եւ անտեղի քննադատությանը համարժեք պատասխանելուն»:

Եվ նորից պնդեց. «Ընտրություններին մասնակցող քաղաքական բոլոր ուժերը երազում են, որ նախընտրական քարոզչության մեջ ՀՀԿ-ի հետ նստեն «առաջին խաղատախտակի» առջեւ: Բայց Հանրապետականը չի ընտրելու առաջին խաղատախտակի ընդդիմախոս, քանի որ մենք իրականում պատրաստվում ենք բոլորի հետ միաժամանակյա խաղի սեանսի»:

ԱՆՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

# «ՀԱԿ-ում չարության եւ ատելության շուրջ են հավաքվել»

Երեկ մեզ հետ զրույցում «Ժառանգության» պատգամավորներ Արմեն Մարտիրոսյանը եւ Անահիտ Բախշյանը վստահեցրին, որ ՀԱԿ-ի եւ «Ժառանգության» միջեւ լուրջ բախումներ կան: Արմեն Մարտիրոսյանի խոսքերով՝ այնպիսի բախումներ եւ ցեխարձակում են լինում ՀԱԿ-ի կողմից, որ իրենք արդեն իմունիտետ են ձեռք բերել դրա դեմ. «Պարբերաբար դա արվում է, անընդհատ եղել է՝ ակտիվ պրոցեսից առաջ: Արդեն սովորել ենք, ուղղակի մեզ համար սկզբունքային է, որ քաղաքականությունը եւս պետք է լինի բարոյականության եւ էթիկայի շրջանակներում, ինչպես ցանկացած գործունեություն: «Ժառանգությունը» մեկ անգամ չէ, որ ցույց է տվել, որ ինքը ընդդիմության համախմբման կողմնակից է: Շատ անգամներ մեր «ես»-ը, մեր քաղաքական ամբիցիաները մի կողմ ենք դրել եւ համախմբման ուղղությամբ աշխատանք տարել, բայց, ցավոք, դա չի գնահատվել մեր գործընկերների կողմից, բացի այդ՝ տեսնում ենք, որ երբեմն հասարակությունն է տուժել՝ ինչպես, օրինակ, ավագանու ընտրությունների ժամանակ, երբ մենք ամբողջ ընդդիմադիր դաշտը նվիրեցինք ՀԱԿ-ին, բայց քաղաքացին ընդդիմադիր ավագանի չունեցավ: Եվ այսօր շատ հարցեր, որ կարելի էր ավագանու մակարդակով բարձրացնել եւ լուծել, այդպես էլ կյանքի չկոչվեցին, եւ նորից ծանրությունը մեր ուսերին մնաց՝ որպես պատգամավորներ»:

Ըստ Անահիտ Բախշյանի՝ ՀԱԿ-ն ու իրենք շատ տարբեր են: Մեր դիտարկմանը, որ երկուսդ էլ իշխանափոխություն եք ուզում՝ տիկին Բախշյանը նկատեց. «Այո, բայց պետք է նայել, թե մենք ինչի շուրջ ենք հավաքվել, իրենք ինչի շուրջ են հավաքվել: Մենք բոլորս, մեր բոլոր անձերը ապացուցել են, որ եկել են՝ հանուն, բայց այն կողմը չար, չարության շուրջ է հավաքվել, ատելության, հասկանո՞ւմ եք: Այդ առումով մենք տարբեր ենք»:

Ըստ տիկին Բախշյանի՝ ՀԱԿ-ի խնդիրները «Ժառանգության» հետ «Ազատ դեմոկրատների» միանալ-չմիանալու հետ կապ չունեն. «Առաջ էլ էին այդպիսին, ուղղակի հիմա դրանք մեջտեղ են դուրս եկել, առաջ ստորգետնյա էին անում՝ տակից: Կար դա, մենք միշտ զգացել ենք»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

### Մուշեղյանը՝ Բեգլարյանի եւ իր տարբերության մասին



ՀՀԿ համամասնական ցուցակի 10-րդ տեղում Գագիկ Բեգլարյանն է, իսկ «Ժառանգության» նույն հորիզոնականում՝ «Աշխարհն առանց արգելքների» հ/կ նախագահ Արման Մուշեղյանը: Aravot.am-ի հարցին՝ Գագիկ Բեգլարյանի եւ Ձեր ներուժն ինչպե՞ս կգնահատեք քաղաքականության մեջ՝ Արման Մուշեղյանը պատասխանեց, որ իրենք տարբեր հարթություններում, տարբեր ոլորտներում են գործում. «Իհարկե, իր ճանաչումով, կարծում եմ, պարոն Բեգլարյանը շատ ավելի հայտնի է, համենայնդեպս՝ Երեւանում, քան ես, բայց այն խնդիրը, որ ես եմ ներկայացնում, պարոն Բեգլարյանին հասանելի չէ: Տա Աստված, որ երբեւիցե չզգա, թե ինչ է զգում հաշմանդամություն ունեցող մարդն իր առօրյա կյանքում: Ես գալիս եմ, որպեսզի ապահովեմ հավասար իրավունքներ: Թե պարոն Բեգլարյանն ինչի համար է գալիս՝ ես չեմ կարող ասել: Մեր ընդհանրությունը իրար հետ միայն 10-րդ տեղի հետ է կապված, դրանից դուրս մենք համեմատության եզրեր չունենք»:

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 6.04.2012

# Համամասնական ցուցակները հիասթափեցնող էին

## «Առավոտի» հետ զրույցում ասաց բլոգեր Տիգրան Քոչարյանը, նույն ինքը՝ «Փիղը»

- Մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի համամասնական ցուցակները վաղուց հայտնի են: Ի՞նչ տպավորություն ստացաք այդ ցուցակներից:

- Այդ ցուցակների հրապարակումից հետո ավելի շատ հիասթափություն կա, որովհետեւ համարյա ոչ մի ցուցակ չարդարացրեց այն սպասումները, որ կային այդ ցուցակներից: Հերթով կարելի է անցնել ցուցակների վրայով ու տեսնել, որ ՀՀԿ-ն ավելի շատ ընդունեց Դաշնակցության սկզբունքը՝ «Հին ընկերներին չեն դավաճանում», եւ բոլոր հին, հնարավոր ընկերներին ներառեց իր ցուցակի մեջ: Ոչ մի նորություն չկար ԲՀԿ ցուցակում, թեեւ բոլորը սպասում էին, որ այդ ցուցակում ակտիվիստներ ու լրագրողներ կհայտնվեն: Չգիտեմ, թե ներսում ի՞նչ է կատարվել, բայց այդ ցուցակը եղավ բավականին տխուր ու անհետաքրքիր: ՀՅԴ-ի ցուցակն ավելի անհասկանալի է, որովհետեւ այնտեղ բավականին շատ անծանոթ մարդիկ կան՝ մեկ: Երկրորդ՝ մինչեւ հիմա ես տպավորված եմ, որ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանն այսօր այդ ցուցակում 20-րդն է, թեեւ ամենաակտիվ պատգամավորներից է եղել: Իմ կարծիքով՝ ինչ-ինչ նկատառումներից ելնելով նրան իջեցնել 20-րդ տեղ՝ սխալ էր: ՀԱԿ-ի ցուցակը բոլորի համար սպասելի ցուցակ էր. ՀԱԿ-ից այլ բան սպասելն անհնար էլ էր: Մի քիչ հետաքրքրություն կար «Ժառանգություն»-«Ազատ դեմոկրատների» մոտ: Այնպիսի տպավորություն է, որ նրանց ցուցակը, համակարգչային ծրագիր կա՝ ռանդոմայզեր, որը միշտ տալիս է պատահական թվեր կամ գաղտնաբառեր, լցրել են ինչ-որ լոտոյի ապարատի մեջ, հետո պատահականության սկզբունքով քաշել են, բայց հերթականությունը չեն պահպանել: Ինչ-որ կոնցեպտուալ գաղափար ես չտեսա այդ ցուցակում, ինչ-որ խառը ու անհասկանալի բան էր: Լարիսա Ալավերդյանը 41-րդ տեղում հայտնվեց. հասկանալի է, թե ինչու, բայց ընդհանրապես, իմ կարծիքով, ավելի լավ կլիներ նա այդ ցուցակում չլիներ, քան լիներ 41-րդը: «Ժառանգության» ցուցակն ամենահետաքրքիրն էր, բայց նաեւ, այսպես ասած՝ ամենաանկապն էր: Այնպիսի տպավորություն է, որ կամ շատ են շտապել ու չեն հասցրել ցուցակ ձեւավորել, կամ մեկն իրենց տվել է այդ ցուցակն ու ասել՝ այսպես պիտի լինի, հարցեր չտաք: Համենայնդեպս, այդ ցուցակից բխող հարցերն ավելի շատ են, քան նույն ՀՀԿ-ի կամ ԲՀԿ-ի, կամ գոյություն չունեցող ՕԵԿ-ի ցուցակների դեպքում:



- Դուք փորձեցիք շրջանցել ՕԵԿ-ի համամասնական ցուցակը:

- Շրջանցում եմ, որովհետեւ չեմ համարում, որ դա կուսակցություն է: Գուցե ժամանակին փորձ է եղել կուսակցություն լինելու, բայց շատերը, որոնց IQ-ն զրոյից մի քիչ բարձր է եւ քաղաքականությունից քիչ թե շատ հասկանում են՝ ՕԵԿ-ին լուրջ չեն ընդունում: ՕԵԿ-ի ժամանակն անցել է: Այն, ինչի համար նա ստեղծվեց եւ աշխատեցվեց ժամանակին՝ հիմա արդեն իրեն լրիվ սպառել է: Թե ինչո՞ւ այս ընտրություններում էլ կա ՕԵԿ, եւ թե ինչո՞ւ ենք նրան կուսակցություն կոչում՝ ինձ համար անհասկանալի է: Շատ հետաքրքիր կլինի նայել այն մարդկանց դեմքերին, որոնք ուղղակի կգնան ու կընտրեն այդ կուսակցությանը ոչ թե ընտրակաշառքի կամ բարեգործության համար, այլ ուղղակի՝ որովհետեւ դա ՕԵԿ-ն է:

- Քննարկում ենք համամասնական ցուցակները, բայց արդյոք այդ ցուցակները կարեւո՞ր են ընտրություններում, կամ դրանք որոշիչ դեր ունե՞ն ընտրություն կատարողի համար՝ նկատի ունենալով, որ Հայաստանում, ըստ էության, քաղաքական, գաղափարական պայքար չի գնում:

- Փորձ է կատարվում անցնել գաղափարական ու քաղաքական ընտրությունների: Դա ավելի վառ է արտահայտված համացանցում կամ էլեկտրոնային լրատվամիջոցներում: Նույնիսկ ՀՀԿ-ն փորձում է ինչ-որ կերպ ընտրությունները դեպի գաղափարական պայքարի թեքել: Բայց համամասնականը, ըստ իս, ավելի շատ թզփշոցի է ժողովրդի աչքին, որովհետեւ իշխանության հարցերը լուծվելու են մեծամասնականով: Իմ կարծիքով՝ ՀՀԿ-ն ԱԺ-ում էլի մեծամասնություն կհավաքի իր մեծամասնականների շնորհիվ, որովհետեւ մեծամասնականի ընտրությունները իրենց յուրահատկությունն ունեն. մարդը, որը «Ժառանգություն» է ընտրելու կամ այլ կուսակցություն, մեծամասնականով կարող է ընտրել ՀՀԿ-ական պատգամավորի, որին ճանաչում է, որն իր ծանոթ-բարեկամն է, որովհետեւ, օրինակ՝ գյուղապետն է ասում եւ այլն: Ընդդիմությունը փորձեց բացառել մեծամասնական ընտրահամակարգը՝ չստացվեց: Մինչեւ մեծամասնականը չվերանա՝ գաղափարական թեժ պայքարի մասին խոսելը, իմ կարծիքով, սխալ է: Մյուս կողմից, ըստ իս, այս ընտրությունները ավելի շատ նախագահական ընտրություններից առաջ փորձարկում, ուժերի ու դիրքերի ճշգրտման, թերությունների վրա աշխատելու հնարավորություն են լինելու: Սա նախագահական ընտրությունների նախապատրաստություն է, եւ ես ինքս էլ նախագահական ընտրություններն ավելի շատ եմ կարեւորում: Հայաստանը մնում է նախագահական երկիր, եւ կառավարվում եւ քաղաքականությունը հիմնականում իրականացվում է նախագահականից, քան որեւէ կուսակցությունից: Հիմա կտեսնենք, թե որ կուսակցությունն ինչքան ձայն կհավաքի, եւ ըստ այդմ՝ կգնան նախագահական ընտրությունների:

- Ի՞նչ եք կարծում՝ այս ընտրությունները նախորդներից տարբերվելո՞ւ են, կամ ավելի լավ ընտրություններ ունենալու սպասելիք կա՞:

- Իմ կարծիքով՝ կա սպասելիք: Առաջին ծիծեռնակը Հրազդանի ընտրություններն էին, որտեղ էլի ամեն ինչով՝ ընտրակեղծիքներով, մեղադրանքներով, երբեմն կեղծ մեղադրանքներով, բայց ընտրությունները քիչ թե շատ ավելի հանգիստ անցան, քան դրան նախորդած, օրինակ՝ Իջեւանի քաղաքապետի սկանդալային ընտրությունները կամ մինչ այդ տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները: Իշխանությունները, իմ կարծիքով, հասկացել են, որ բռնի կերպով կամ բազկին ապավինելով ժողովուրդն արդեն իրեն չի ընտրում կամ գումարը վերցնում՝ գնում ուրիշին է ընտրում: Այսինքն՝ իշխանությունն էլ է հասկանում, որ պետք է այլ կերպ աշխատել, եւ այդ աշխատանքը երեւում է. ընտրական տեխնոլոգիաներն են փոխվում: Բացի այդ, այս տարի բավականին հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել, երբ ընտրողը հնարավորություն ունի ընտրություն կատարելու չորս ցուցակի միջեւ. իշխանական դաշտում՝ ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի, ընդդիմադիր դաշտում՝ «Ժառանգության» եւ ՀԱԿ-ի միջեւ: Այսինքն՝ բեւեռացում չկա: Անշուշտ, սա ավելի լավ է, ու քաղաքական դաշտի զարգացման իմաստով էլ ավելի հետաքրքիր իրավիճակ ստացվեց. եթե դու ընդդիմադիր ես՝ ունես ընտրության հնարավորություն այդ դաշտում, նույնը նաեւ իշխանամետ ընտրազանգվածի մասին կարելի է ասել: Դա, իհարկե, ընդդիմության համար ցավալի է, որովհետեւ ձայները բաժանվում են, բայց եթե խոսում ենք ընտրական մշակույթի զարգացման մասին՝ դա շատ ավելի հաճելի ու լավ է: Հետագայում, գուցե, մենք կհասնենք նաեւ ամերիկյան «փրայմերիզ» գաղափարին, երբ կլինեն նախնական ներկուսակցական ընտրություններ, հետո նոր՝ համապետական:

Մյուս դրական փաստն այս անգամ այն է, որ քչացել են ընտրություններին մասնակցող կուսակցությունները, ինչը քաղաքացուն ավելի շատ է կենտրոնացնում ընտրությունների վրա: Նախկինում կային փոքր կուսակցություններ, որոնք ինչ-ինչ նպատակներով մասնակցում էին ընտրություններին ու ձայն էին փոշիացնում: Հիմա ընտրողների ձայները բաշխվելու են ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀԱԿ-ի, «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի միջեւ, ու, իմ կարծիքով՝ վերջ, թեեւ ՕԵԿ-ից ամեն ինչ սպասելի է:

- Ես չեմ հարցնի Ձեր քաղաքական նախասիրությունների մասին կամ, թե ում եք ընտրելու, բայց արդյոք արդեն կողմնորոշվե՞լ եք, թե ում եք ընտրելու, թե՞ դեռ ծանրութեթեւ եք անում:

- Ես կողմնորոշվել եմ մեծամասնականով. ընտրելու եմ Ստեփան Սաֆարյանին: Իսկ համամասնականի մասով դեռեւս տատանվում եմ, չգիտեմ՝ ընդհանրապես ընտրություն անելո՞ւ եմ, թե՞ ոչ: Առաջ միշտ ընտրում էի ՀՅԴ-ին, բայց հիմա... Մի քիչ հիասթափվել եմ:

Հարցազրույցը վարեց

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ

Հ. Գ Հարցազրույցն ամբողջությամբ կարդացեք Aravot.am կայքում:

# Ճոճուն ակնկալիքներով՝ հզոր Հայաստան

## ԲՀԿ-ն խոստանում է նվազեցնել էլեկտրաէներգիայի եւ ոռոգման ջրի սակագները

2007 թվականի խորհրդարանական ընտրություններին նորաստեղծ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ներկայացավ երկրի քաղաքական կյանքում՝ իր առաքելությունը համարելով քաղաքացիական համախմբվածության ու համերաշխության նպաստելը: 2007-ին ԲՀԿ-ն դարձյալ գտնում էր, որ. «Հայաստանի առջեւ ծառացած հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն ժողովրդի վստահությունը վայելող, բարձր արժեքներ, ազնիվ նպատակներ ու վեհ գաղափարներ դավանող անհատների եւ քաղաքական ուժերի համախմբման ու համագործակցության պարագայում»: Կուսակցության 2012-ի նախընտրական ծրագրում դեկլարատիվ ամրագրում կա. «Մեր երկիրը բազմաթիվ չլուծված խնդիրների առջեւ է կանգնած՝ սկսած աշխատանքից, սոցիալական արդարությունից ու տնտեսական պայմաններից, մինչեւ քաղաքական օրակարգում օրեցօր ավելացող հիմնահարցերը: Հայաստանն այսօր գտնվում է իր զարգացման վճռորոշ փուլում»: ԲՀԿ-ում արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմակայելու, Հայաստանում քաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական եւ հոգեւոր-մշակութային կայուն առաջընթաց արձանագրելու գրավականն առաջիկա հինգ տարիների համար համարում են. «Քաղաքական ուժերի եւ անհատների միջեւ հարցանքի մթնոլորտի ձեւավորումը, ազգային գերակա խնդիրների շուրջ հասարակական լայն համախմբումն ու համագործակցությունը, ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող օրենսդիր իշխանության առկայությունը»: Կուսակցության համար շարունակում է արդիական մնալ «Մարդու կողքին, մարդու միջոցով եւ մարդու համար» կարգախոսը: Սակայն 2012-ի ծրագրի նախաբանում ընտրողներին ուղղված իր խոսքում Գագիկ Ծառուկյանը խոստովանում է, որ բարեգործությամբ երկիր չես պահի. «Այս տարիների ընթացքում ես եւ իմ թիմը մշտապես եղել ենք ձեր կողքին, աշխատել ենք թեթեւացնել մեր ժողովրդի հոգսն ու ցավը, մեր հնարավորության սահմաններում սատար կանգնել կարիք ունեցողներին: Սակայն բարեգործությամբ երկիր չես կառուցի: Բարեգործությունն անձնական պատասխանատվություն է, իսկ քաղաքականությամբ զբաղվող յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ այդ պահից ինքը պատասխանատու է ժողովրդի, իր ընտրողների եւ իր պետության առջեւ»: Հանրությանն ուղղված իր ուղերձում ԲՀԿ առաջնորդը նաեւ նկատում է. «Ձեր եւ միայն ձեր ընտրությունից է կախված լինելու, թե ինչպիսի Հայաստան ենք մենք ունենալու առաջիկա տարիներին: Դուք եք այն ուժը, որով կարող ենք մեր հայրենիքը դարձնել ավելի բարեկեցիկ, ավելի ժողովրդավար, խաղաղ ու անվտանգ»:

Ու այսպես՝ հավատով եւ ճոճուն ակնկալիքներով, որ միասնական ուժերով կարող ենք Հայաստանը դարձնել ավելի հզոր, ավելի անվտանգ, տնտեսությունը՝ մրցունակ, մեր հայրենակիցների կյանքը՝ բարեկեցիկ, ԲՀԿ-ն առաջիկա հինգ տարիների համար առաջնահերթ է համարում ուժեղ տնտեսության հասնելը: Տնտեսության զարգացումը ԲՀԿ-ում տեսնում են գիտելիքների հենքի վրա: Ինչպես հինգ տարի առաջ ԲՀԿ-ում կարծում-խոստանում էին, որ տնտեսությունը չպետք է կենտրոնացված լինի մայրաքաղաքում. «Դրա զարգացումը պետք է նպաստի ՀՀ տարածքային անհամամասնությունների կրճատմանը, իսկ որպես տնտեսական աճի կարեւոր պայման՝ անհրաժեշտ ենք համարում հնարավորինս նվազեցնել էլեկտրաէներգիայի եւ ոռոգման ջրի սակագները եւ բարձրացնել դրանց բաշխման արդյունավետության մակարդակը»: Գործարարության բարենպաստ միջավայր ստեղծելու ԲՀԿ-ի 2007-ի խոստումն առաջիկա հինգ տարիների համար էլ շարունակում է մնալ ուժի մեջ, եւ այդ համատեքստում, մասնավորաբար, առաջարկում են պետական աջակցություն փոքր ու միջին ձեռնարկատերերին: Ավելի կոնկրետ՝ յուրաքանչյուր տարվա պետբյուջեի ծախսային մասի առնվազն 0,5-2 տոկոսի հատկացում՝ 2007-ի 1 տոկոսի փոխարեն, ինչպես նաեւ վարձու աշխատանք չօգտագործող անհատ ձեռնարկատերերին հարկերից ազատում: ԲՀԿ-ի համար գերխնդիր է մնում ստվերային տնտեսության դեմ կոշտ, բայց հիմնավորված պայքարը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲՀԿ ծրագրային այլ դրույթներին կանդրադառնանք առաջիկայում:

# «Զատիկի» սանը ինքնասպանության փորձ է արել ուշադրության պակասի՞ց

## Մանկատան մասնագետները պնդում են, որ նա ունի շեշտված «դեմոնստրատիվ» վարք, որը բնորոշ է դեռահասներին:

Երեք օր առաջ ուշ երեկոյան Կիեւյան կամրջից ցած նետվելու փորձ էր կատարել «Զատիկ» մանկատան ժամանակավոր խնամքի կենտրոնի սան 15-ամյա Ա. Մ-ն, որն արդեն մեկ ամիս է՝ այդ կենտրոնում է: Անչափահասի ինքնասպանության փորձը կանխել էին ոստիկանները՝ մանկատան սանին իրենց հետ տանելով բաժին: Երեկ «Առավոտը» այցելեց «Զատիկ» մանկատուն՝ դեպքի մանրամասներին ծանոթանալու: Մեր այցելության պահին էլ Ա. Մ.-ն վիճաբանության մեջ էր մանկատան մյուս երեխաների հետ: Նա, ինչպես մեզ հետ զրույցում պատմեցին մանկատան աշխատակիցները, երկար ժամանակ է՝ գտնվում է անհավասարակշիռ, լարված ու նյարդային վիճակում: Պատճառը օրերս լրատվամիջոցներից մեկով այս երեխայի մասին ռեպորտաժն էր, որտեղ երեխայի անձնական կյանքից վիրավորական մանրամասներ էին հրապարակվել, ինչն էլ առիթ էր տվել մանկատան երեխաներին շահարկելու՝ չնայած մանկատան պատասխանատուները պնդում են, որ Ա. Մ.-ն էլ իր խառնվածքով այնպիսին է, որ կոնֆլիկտներ է հրահրում:

Մենք զրուցեցինք նաեւ Ա. Մ.-ի հետ՝ հասկանալու համար, թե ի՞նչն է նրան դրդել ինքնասպանության: 15-ամյա աղջնակը բավականին սրտնեղած էր ու ինքնամփոփ: «Ինչ արել եմ՝ լավ եմ արել: Ու լիքը պատճառներ ունեմ ինքնասպանություն անելու համար: Տենց եմ ուզում՝ տենց եմ անում: Ու էլի եմ գնալու, առանց վեշերի եմ գնալու, որովհետեւ ուր որ ուզում եմ գնամ՝ վեշեր պետք չեն»,- այսպես մեկնաբանեց Ա. Մ.-ն իր ինքնասպանության փորձը:

Հետո նա մեզ հետ զրույցում մի փոքր կիսվեց, որ մի քանի անգամ եւս դիմել է ինքնասպանության, եւ որ ժամանակին նաեւ հոգեբուժական կենտրոնում է հայտնվել. «Ընդեղի մարդիկ ավելի լավն են, քան նորմալ մարդիկ, իրանք գոնե չեն նեղացնում ինձ: Հոգնել եմ ամեն ինչից»:




Ինքնասպանության փորձից հետո Ա. Մ.-ն խաղում է ընկերների հետ:

15-ամյա աղջնակի վարքագիծը «Զատիկի» տնօրեն Աշոտ Մնացականյանը եւ հոգեբանը բնութագրեցին որպես բարդ երեւույթ, եւ ինքնասպանության փորձն ու աղջկա ընդհանուր պահվածքը ուղղակի ուշադրության կոչ են՝ sos: Մինչ «Զատիկ»-ում հայտնվելը՝ աղջիկը որոշ ժամանակ ապրել է նաեւ ընդունման եւ կողմնորոշման կենտրոնում, որտեղ շատ խիստ պայմաններ են՝ բարձր պարիսպներով ու փշալարերով պատված շենք է՝ հատուկ մասնագետներով ու ոստիկանի հսկողությամբ: Սակայն այդ պայմանները էլ չեն խոչընդոտել Ա. Մ.-ին՝ այդտեղից փախչելու: Իսկ «Զատիկ»-ում նման խիստ պայմաններ չկան, ուստի մի քանի անգամ մանկատնից փախուստի դիմելն այս երեխայի համար խնդիր չէր: «Մենք նույնիսկ պարտավոր էլ չենք նրան պահել, ի վիճակի էլ չենք վերահսկել: Որքան նման ծայրահեղ դեպքեր են լինում, անմիջապես մեզ մոտ են բերում»: Մինչդեռ մանկատունը, տնօրենի վստահեցմամբ, մասնագիտացված չէ հոգեկան շեղումներով երեխաներին խնամելու, քանի որ ժամանակավոր խնամքի կենտրոնը միանգամայն այլ ֆունկցիա է կատարում. «Բոլորիս մեջ էլ կա՝ լինել ուշադրության կենտրոնում, բայց ոմանց մոտ դա խիստ շեշտված եւ արտահայտված է: Այս երեխան իրեն լրիվ այլ աշխարհի է զգում, ու ինքն էլ չի զգում, որ խաղում է: Նա սնվում է ուշադրությամբ, բայց երբ տեսնում է, որ մի քիչ ուշադրությունից դուրս է մնացել, կրկին ինչ-որ քայլի է դիմում: Մեր ժամանակավոր խնամքի կենտրոնում ապաստանելը մաքսիմալ 6 ամիս է: Կարող ենք 10-15 օր պահել նրան: Անշուշտ, եթե դեպքն այսպիսի բարդություն ունի, նշանակում է՝ ես ատոմային ռումբի վրա եմ նստած: Դա կպայթի, ու ոչ ոք չի նայի իմ տարիների վաստակին»: Տնօրենի խոսքերով՝ այս անչափահասով մտահոգված են ու խառնված նաեւ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությունում. «Իրենք էլ պատկերացնում են ու ընդունում, որ ռումբի վրա են նստած: Այս երեխան կոնֆլիկտային է ու հոգեբանական խնդիրներ ունի եւ հաճախ անկառավարելի է դառնում: Սոցապ նախարարությունը բանակցում է առողջապահության նախարարության հետ, որպեսզի նման դեպքերի համար որեւէ կենտրոն բացվի, քանի որ անչափահասների հոգեբուժական կենտրոնը, կարծեմ, փակվել է»:

Մեզ հետ զրույցում «Զատիկ» մանկատան հոգեբանն էլ, որը աշխատում է Ա. Մ.-ի հետ, նշեց, որ այս անչափահասը սիրում է լինել ուշադրության կենտրոնում, դրանով է ինքնահաստատվում. «Ինքը ունի շեշտված ու դեմոնստրատիվ վարք, որը շատ բնորոշ է դեռահասության տարիքին: Իսկ նրա կոնֆլիկտները ավելի շուտ պաշտպանական ռեակցիա են»:

Մանկատան տնօրենն էլ պատմեց, որ Ա. Մ.-ն ժամանակին տանից փախչել է ինքնուրույն ու ազատ ապրելու համար, ընդ որում՝ իր փախուստը անչափահասը պատճառաբանել է նրանով, թե ինքը չի ցանկանում գյուղում ապրել, ուզում է մայրաքաղաքում բնակվել: Տնօրենի խոսքերով՝ Ա. Մ.-ն Գավառի մարզի գյուղերից է, նրա ծնողներն ու քույրն այնտեղ են բնակվում: Սակայն ծնողներն էլ այլեւս ի վիճակի չեն նրան խնամելու նրա վարքի եւ հոգեբանական խնդիրների պատճառով: Տնօրենի վստահեցմամբ՝ երբ Ա. Մ.-ն ծնողի հետ հեռախոսազրույցի ժամանակ տուն վերադառնալու ցանկություն է հայտնել, նրա հայրն անմիջապես զանգահարել է տնօրենին ու խնդրել Ա. Մ.-ին չուղարկել գյուղ. «Չենք ուզում, չենք կարող պահել»:

Թե ինչպես կլուծվի անչափահաս Ա. Մ.-ի ճակատագիրը, ինչպես մանկատան տնօրենն ասաց՝ դեռ պարզ չէ, ոստիկանությունում քննվում է նրա գործը, սակայն առհասարակ մանկատան սաների ճակատագրերի, այսպես ասած, ճիշտ տնօրինումը ամբողջ աշխարհում դեռ լուծված չէ. «Այդ ուղղությամբ աշխարհում մոդելներ են մշակվում, իսկ հոգեբանական առումով դա չլուծված խնդիր է: Մանկատան երեխան ինքնին բարդ երեւույթ է: Գտնել այդ հարցի լուծումը աշխարհում չի հաջողվել, տոկոսային առումով փոքր է հաջողությունը»:

Թեեւ մեր զրույցի սկզբում ինքնասպանության փորձ գործած Ա. Մ.-ն նշել էր, որ էլի է պատրաստվելու նման փորձ կատարել, սակայն երբ մենք լքում էինք մանկատունը, նա իր ընկերների հետ բակում աշխուժորեն բասկետբոլ էր խաղում:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

## ՎիվաՍել-ՄՏՍ-ը մասնակցելու է «IPv6 արձանագրության միջազգային օր» իրադարձությանը

Հայաստանում հեռահաղորդակցության առաջատար օպերատորը ինտերնետային արձանագրության նոր՝ IPv6 տարբերակին անցման փուլում է: Ինտերնետային ծառայությունների առաջատար մատակարարները, ցանցային սարքավորումներ արտադրողները եւ ցանցային ընկերությունները հանդես են եկել նախաձեռնությամբ, համաձայն որի՝ մինչեւ 2012 թ. հունիսի 6-ն իրենց արտադրանքի եւ ծառայությունների համար պետք է սկսեն օգտագործել IPv6 ինտերնետ արձանագրությունը: Որպես հայաստանյան բջջային հաղորդակցության ոլորտի առաջատար՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը եւս որոշում է կայացրել մասնակցելու IPv6 ինտերնետ արձանագրության գործարկման միջազգային նախաձեռնությանը, որը համացանցի պատմության մեջ ամենամասշտաբային սերնդափոխությունը կդառնա:

IPv6-ը՝ ներկայում գործող IPv4-ին հաջորդող ինտերնետ արձանագրությունը, առանցքային նշանակություն կունենա համացանցի զարգացման ոլորտում:

1981-ից գործող IPv4 արձանագրության հասցեներն արդեն գրեթե սպառված են: Ինտերնետի արագ աճին զուգընթաց ի հայտ է եկել նոր՝ IPv6 ինտերնետ արձանագրության ստեղծման անհրաժեշտությունը, որն ընձեռում է ավելի շատ IP հասցեներ տրամադրելու եւ հետեւաբար՝ համացանցին ավելի շատ թվով սարքեր միացնելու հնարավորություն:

Ի տարբերություն IPv4-ի՝ IPv6-ի կարեւորագույն առանձնահատկություններից է հասցեների առավել ընդլայնված տարածքը: Մասնավորապես՝ IPv4 ինտերնետ արձանագրությունն օգտագործում է հասցեների 32-բիթանոց ձեւաչափ կամ, այլ կերպ ասած՝ ապահովում է ավելի քան 4 մլրդ եզակի IP հասցե, իսկ 1995թ.-ից՝ IPv4 արձանագրությանը զուգահեռ գործող IPv6 արձանագրությունն օգտագործում է հասցեների 128-բիթանոց ձեւաչափ եւ համապատասխանաբար՝ ապահովում է 340 տրլն եզակի հասցե:

IPv6-ի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված էր ավելի մեծ թվով անհատական IP հասցեներ ապահովելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ինտերնետին միացման համար օգտագործվող սարքերի՝ անհատական համակարգիչների, բջջային հեռախոսների եւ բազմաթիվ այլ սարքերի օրեցօր աճող թիվը:

Բջջային հաղորդակցության շուկայում առաջատարի դեկը ստանձնած ՎիվաՍել-ՄՏՍ-ը տվյալների փոխանակման ծավալների շարունակական աճ է արձանագրում եւ մեծ կարեւորություն է տալիս IPv6 ինտերնետ արձանագրության ներդրմանը:

IPv6-ը հասանելի կլինի ավտոմատ կերպով՝ IPv4-ին զուգահեռ: ՎիվաՍել-ՄՏՍ-ի պաշտոնական կայքէջը՝ www.vivacell.am, աշխատում է թե՛ IPv4 եւ թե՛ IPv6 ինտերնետ արձանագրություններով:

# Marriott Armenia հյուրանոցում լողավազան չկա

## Իսկ Ani Plaza-ում հարեւանների գիշերային աղմուկը խանգարում է քնել

Երեւանում առանց լուրջ թերության ոչ մի հյուրանոց չկա: Այդպիսի հետեւության են հանգել M-Info մարքեթինգային ընկերության մասնագետները մինչեւ նոր զբոսաշրջության սեզոնի բացումը: Նրանք հետազոտել են մայրաքաղաքի գլխավոր հյուրանոցներում ժամանակավոր օթեւան գտած հարյուրավոր զբոսաշրջիկների կարծիքներն ու տպավորությունները սպասարկման մակարդակի, գների եւ հարմարությունների վերաբերյալ:

Ինչպես «Արմինֆոյի» թղթակցին հաղորդել է M-Info ընկերության գործադիր տնօրեն Մարիամ Սիմոնյանը, Երեւանի բնակիչը, որ հպարտությամբ թվարկում է մայրաքաղաքի հյուրանոցների անվանումները, իրականում թերի պատկերացում ունի այն մասին, թե ինչպիսի տրամադրությամբ են դրանցում ապրում մայրաքաղաքի հյուրերը: Նրա ասելով՝ զբոսաշրջիկների շրջանում հարցումը ցույց է տվել, որ թերություններ կան Երեւանի բոլոր հյուրանոցներում, իսկ երբեմն՝ նաեւ շատ լուրջ: Մասնավորապես՝ հարցման ենթարկված զբոսաշրջիկների մեծ մասը դժգոհություն է հայտնել կերակուրների որակի եւ տեսականու առնչությամբ, հատկապես տուժում են բուսակերները, որոնց՝ սննդի նկատմամբ նախասիրությունները հաշվի չեն առնվում հյուրանոցների ռեստորաններում: Այնտեղ հաշվի չեն առնում նաեւ այլ խոհարարական առանձնահատկություններ, որոնք կարող են ազդել երկրի մասին ընդհանուր տպավորության վրա: Հաշվի չի առնվում, օրինակ, որ օդի մաքրությունը հատկապես կարեւոր է չծխող հաճախորդների համար, վերջիններս դժգոհություն են հայտնել չծխողների համար հարկաբաժինների բացակայության առնչությամբ, միջանցքներում ծխախոտի ծխի հոտ է փչում: Այսպես, հետազոտության տվյալների համաձայն, Marriott Armenia հյուրանոցում իջեւանած 55 զբոսաշրջիկների ընդամենը 18%-ն է գոհ ամեն ինչից, 8%-ը դժգոհ է բարձր գներին չհամապատասխանող սպասարկումից, սակայն հիմնական դժգոհությունն առնչվում է լողավազանի բացակայությանը: Ani Plaza հյուրանոցում իջեւանել էր 500 հարցվածներից 69 մարդ: Զբոսաշրջիկների հիմնական դժգոհությունն առնչվել է փոքր սենյակներին եւ բարակ միջնապատերին, ինչի հետեւանքով աղմկոտ հարեւանների առկայության պայմաններում դժվար է  քնել: Ani-ի կենվորների 10 %-ը դժգոհ էր սննդից: Ի տարբերություն Marriott-ի՝ Ani-ում կա լողավազան, սակայն զբոսաշրջիկներին չի գոհացնում այն հանգամանքը, որ հյուրանոցի տնօրինությունը դրանից օգտվելու համար լրացուցիչ վճար է պահանջում: Congress հյուրանոցի գլխավոր թերությունը փողոցից եկող անվերջ աղմուկն է, եւ սպասարկումն էլ, հարցման մասնակիցների կարծիքով, պարզվում է՝ այնքան բարձր մակարդակի չէ: Metropol հյուրանոցում զբոսաշրջիկները կցանկանային գործ ունենալ ավելի ճշտապահ, պատասխանատու անձնակազմի հետ: Golden Tulip հյուրանոցում, հարցման մասնակիցների կարծիքով, աղքատ է կերակուրների տեսականին:

Զբոսաշրջիկները նշել են նաեւ կարեւոր մի թերություն, որը բնորոշ է Երեւանի գրեթե բոլոր հյուրանոցներին. դրանցում բացակայում են հաշմանդամների համար հատուկ հարմարությունները:

«Արմինֆո»

Առավոտ
a r a v o t d a i l y
ՈՒՐԲԱԹ 6.04.2012

# «Վարորդական» թունավորումներ

Ինչպիսի թույների հետ է վարորդը շփվում իր աշխատանքային գործունեության ընթացքում, եւ ինչպես խուսափել թունավորվելուց:

Աշխատանքային գործունեության ընթացքում կամ կենցաղային անհրաժեշտության բերումով վարորդները մշտապես վտանգված են թունավորումների՝ ածխածնի օքսիդով, էթիլացված բենզինով ու անտիֆրիզով:

Ուստի անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր պրոֆեսիոնալ վարորդ ու ավտոսիրող իմանա այդ նյութերից պաշտպանվելու ձեւերի, իսկ թունավորվելու դեպքում՝ առաջին բուժօգնության միջոցների մասին:

Ածխածնի օքսիդով թունավորվելը հնարավոր է, երբ մարդը գտնվում է աշխատող ավտոշարժիչի գազով լցված փակ տարածություններում՝ ավտոտնակում, ավտոտաղավարում, «բոքսում» կամ էլ հենց ավտոմոբիլում, երբ վերջինիս պատուհանները փակ են, եւ այրման գազերը ինչ-ինչ ճանապարհով լցվում են ավտոխցիկի մեջ, առավել եւս՝ երբ ավտոշարժիչը գործում է ավտոմեքենայի կանգնած վիճակում: Ածխածնի օքսիդը անհոտ, անգույն գազ է, որի հետեւանքով էլ թունավորումը վրա է հասնում աննկատ:

Թունավորման նշաններն են գլխացավը, քնկոտությունը, կողմնորոշման խանգարումը, ռեակցիայի դանդաղումը, տեսողության վատացումը: Հաճախ լինում են նաեւ արցունքահոսություն, հազ, փռշտոց, գլխապտույտ, նողկանք, փսխում, կրծքացավ, հեւոց, լսողական ու տեսողական ցնորքներ եւ այլն:

Մասնագետներն ասում են, որ երբ վրա է հասնում երկրորդ փուլը՝ մկանային թուլությունը, դրա հետեւանքով էլ տուժածը ի վիճակի չի լինում ինքնուրույն դուրս գալ թունագազով լցված տարածությունից՝ ավտոմեքենայից:

Թունավորման նախանշանների դեպքում անհրաժեշտ է տուժածին շտապ դուրս բերել մաքուր օդ, շնչեցնել անուշադրի սպիրտ: Գիտակցության վերականգնման ընթացքում անհրաժեշտ է տուժածին խմեցնել մուգ թեյ, գլխացավի դեպքում տալ անալգին կամ պիրամիդոն, իսկ գիտակցության լրիվ վերականգնումից հետո՝ անհապաղ տեղափոխել մոտակա բուժհիմնարկ:



Ողջ օրվա ընթացքում վարորդը թունավորվում է բենզինով, էթիլացված բենզինով, որն էլ իր մեջ պարունակում է ուժեղ թույն հանդիսացող տետրաէթիլ կապար: Բենզինը մարդու օրգանիզմ կարող է թափանցել մաշկի, լորձաթաղանթի, շնչուղիների եւ ստամոքս-աղիքային տրակտի միջոցով:

Էթիլացված բենզինով թունավորումը կանխելու նպատակով անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետեւյալ կանոնները.

1. Բենզին լցնել-հանելու բոլոր գործողությունները կատարել առանձին պահվող հատուկ ռետինե ձեռնոցներով:

2. Ավտոմոբիլը լիցքավորելիս կանգնել մեջքով դեպի քամին:

3. Խստիվ արգելվում է ռետինե խողովակից բերանով բենզին քաշելը կամ ավտոմոբիլի սնման համակարգի մեջ փչելը:

4. Չի կարելի սննդամթերքը պահել բենզինի տակառի մոտ, քանի որ միսը, հացը, ճարպը հեշտությամբ կլանում են բենզինի գոլորշիներում առկա տետրաէթիլ կապարը եւ իրենց թունավոր հատկությունը պահպանում նույնիսկ ջերմային մշակումից հետո:

5. Չի կարելի էթիլացված բենզինը կիրառել հագուստ մաքրելու, ձեռքեր լվանալու, նավթավառ, կենցաղային այրիչներ լիցքավորելու համար:

6. Բենզինով ձեռքերը կեղտոտելուց հետո անհրաժեշտ է լվացվել նավթով, ապա օճառով ու տաք ջրով:

Իսկ ինչ ենք տեսնում մենք ամենօրյա տրանսպորտային միջոցներից օգտվելու ժամանակ: Լավատեղյակությունը, կարգուկանոնն այս դեպքերում ապահովության լավագույն գրավականն են:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

«Նոր Արաբկիր» առողջության կենտրոնի հոգեթերապեւտ

## Զենքի հափշտակության գործով

ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում 2012թ. մարտի 3-ից քննվում է ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ պաշտոնեական դիրքը չարաշահելով զենք, զինամթերք հափշտակելու հատկանիշներով հարուցված քրեական գործը, որի շրջանակներում ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարի տեղակալ Վանիկ Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել զենք, ռազմամթերք հափշտակելու համար: 2012թ. մարտի 6-ին Վանիկ Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Քրեական գործով կասկածյալի եւ մեղադրյալի կարգավիճակ ունեցող այլ անձինք չկան: Հատուկ քննչական ծառայությունը տեղեկացնում է, որ նախաքննության ընթացքում հարցաքննվել եւ հարցաքննվում են բազմաթիվ վկաներ:

Նախաքննությունը շարունակվում է:

Սեփ. լր.

## «Ժիգուլին» բախվել է ավտոբուսի

ՀՀ ոստիկանությունից տեղեկացրին, որ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան Ավան թաղամասում բախվել է ճանապարհին կայանված «Բոգդան» մակնիշի ավտոբուսի, ինչի հետեւանքով «ՎԱԶ-2106»-ի վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

## Երեխային տեղափոխել է հիվանդանոց

«Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Անդրանիկի փողոցում վրաերթի է ենթարկել 10-ամյա մի տղայի եւ նրան տեղափոխել հիվանդանոց: Կատարվում է քննություն:

## Ավազակին կալանավորել են

Ոստիկանության ծառայողները Երեւանի Սվաճյան փողոցից բերման են ենթարկել 1985թ. ծնված Վիգեն Գալստյանին, որը 2005թ. դեկտեմբերի 5-ից Ուկրաինայի Դոնեցկի մարզի իրավապահների կողմից հետախուզվում էր ավազակային հարձակում կատարելու մեղադրանքով: Խափանման միջոց է ընտրվել կալանքը:

## Հետախուզվողը հայտնաբերվեց

Ոստիկանության ծառայողները Բագրատաշենի մաքսատան հարակից տարածքից բերման են ենթարկել 1976թ. ծնված Սուրեն Օհանյանին, որը 2009թ. դեկտեմբերի 2-ից ՌԴ Տուլայի մարզի իրավապահների կողմից գտնվում էր հետախուզման մեջ:

# Որ չեն հավատում, ինչպե՞ս փոխվեն

Տավուշի սահմանագոտու բնակիչները հուսահատված են, նման հոռետեսություն չկար նույնիսկ պատերազմական ամենածանր տարիներին: Այս իրողությունը նկատել է Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, որը մարտի 30-ին, մի խումբ փորձագետների հետ, Նոյեմբերյանում մասնակցել է «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ղարաբաղյան հիմնախնդիրը եւ սահմանային միջադեպերը նոր մեդիայում եւ քաղաքական ուժերի օրակարգում» թեմայով «կլոր սեղանին»:

Տավուշի մարզային «Տավուշ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում պարոն Նավասարդյանն ասաց. «Այս քննարկումների ժամանակ մարդիկ համեմատում էին 90-ական թվականների սկիզբը, երբ տնտեսական վիճակն ավելի վատ էր, քան այսօր, հոսանք չկար, մութ եւ ցուրտ տարիներ էին: Բայց այն ժամանակ հույս կար, որ կպաշտպանենք մեր երկիրը, կսկսենք վերակառուցել եւ կունենանք լուսավոր ապագա: Դա էր պատճառը, որ մարդիկ գնում էին պատերազմ: Չնայած կար արտագաղթ, բայց ժամանակավոր արտագաղթի տպավորություն էր թողնում, այսինքն՝ գնամ, ես երկու տարին գլուխս պահեմ, հետո կվերադառնամ... Այսօր քաղաքական ուժերի, հասարակական ակտիվ մարդկանց նպատակը, խնդիրը այն է, որ պետք է ընտրությունների նկատմամբ արթնացնել վստահություն եւ հույս, որ ընտրությունների միջոցով մենք կարող ենք ձեւավորել այնպիսի մի իշխանություն, որ մեզ հետ միասին կկարողանա բոլոր խնդիրները լուծել: Եթե այդ հույսը լինի, ինձ թվում է՝ այդ որոշակի հիասթափությունը, հոռետեսությունը մարդկանց մոտ կհաղթահարվի»: Տավուշի մարզային «Տեսանկյուն» լրատվական կայքը տեղադրել է հարցում՝ «հավատո՞ւմ եք, որ մայիսի 6-ի ընտրությունները լինելու են ազատ եւ արդար»: Մինչ այժմ հարցմանը մասնակցել է 163 մարդ, որից 28%-ը պատասխանել է «այո», 61%-ը՝ «ոչ», 11%-ը դժվարացել է պատասխանել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Երկու դատավոր 8 ամսում չկարողացան վճիռ կայացնել

2011թ. հուլիսին «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ն Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան հայց էր ներկայացրել «Իջեւանի ստուդիա» ՍՊԸ-ի եւ այդ հեռուստաընկերության լրագրող Նաիրա Խաչիկյանի դեմ՝ պահանջելով պարտավորեցնել Նաիրա Խաչիկյանին եւ «Իջեւան ստուդիա» ընկերությանը հրապարակորեն ներողություն խնդրել եւ հօգուտ «Իջեւան ՃՇՇ» ՓԲԸ-ի՝ Նաիրա Խաչիկյանից եւ «Իջեւան ստուդիա» ՍՊԸ-ից համապարտությամբ բռնագանձել երեք միլիոն դրամ՝ որպես փոխհատուցում, եւս երկու հարյուր վաթսունչորս հազար դրամ (որպես դատական ծախս), որից երկու հարյուր հազար դրամը՝ փաստաբանին վճարած վարձատրության գումար եւ 64 հազարը՝ որպես վճարված պետական տուրքի գումար: «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ն հայցադիմումի մեջ նշել է, որ 2011թ. հունիսի 21-ին հայկական երկրորդ հեռուստաալիքի «Լրաբեր» լրատվական ծրագրով հեռարձակված տեսանյութում տեղ են գտել «Իջեւանի ՃՇՇ»-ի գործարար համբավը արատավորող կեղծ տեղեկություններ: Դատը սկսվել էր 2011թ. օգոստոսի 18-ին, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում: Կայացել էին բազմաթիվ նիստեր, սպասվում էր, որ նոյեմբեր ամսին դատավոր Արշակ Շահոյանը կհրապարակի վճիռը: Սակայն անպասելի կերպով գործը քննող դատավորը փոխվեց: 2012թ. հունվարի 20-ին Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատավոր Արման Կուրեխյանը փաստացի «նոր տողից» սկսեց դատը: Դատավոր Ա. Կուրեխյանն Արշակ Շահոյանի նման ամիսներով քննեց գործի



Փաստաբաններ Գարի Գալիկյանը եւ Նիրա Խաչատրյանը:

ապացույցները: Նշենք, որ Նաիրա Խաչիկյանը երբեւէ դատարան չներկայացավ, դատարանում նրա շահերը ներկայացնում էր փաստաբան Գարիկ Գալիկյանը, իսկ «Իջեւան ստուդիայի» որեւէ ներկայացուցիչ դատարան չներկայացավ: Դատարանում «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ շահերը ներկայացնում էր փաստաբան Նաիրա Խաչատրյանը: Մարտի 22-ին դատավոր Արման Կուրեխյանը հրապարակել է վճիռը, որտեղ ասվում է. «Գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները չպարզված լինելու, ինչպես նաեւ գործով կիրառման ենթակա օրենքները եւ այլ իրավական ակտերը որոշելիս դատարանը հանգել է այն հետեւության, որ անհրաժեշտ է վերսկսել գործի քննությունը եւ լրացուցիչ հետազոտել ապացույցները»: Դատավարությունը 8 ամիս շարունակվելուց հետո ի՞նչ «չպարզված հանգամանքներ» ի հայտ եկան, որոնց պետք է լրացուցիչ հետազոտել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Հեզ, սիրող կին՝ ընտանիքում, ակտիվ՝ քաղաքականության մեջ

## Կամ կանայք՝ կանանց մասին

Մարտի 8-ի առիթով «Առավոտի» հետ զրույցում տարբեր ոլորտների տղամարդիկ ամենաջերմ խոսքերն էին հնչեցրել կանանց հասցեին ու հայտարարել, թե պատրաստ են ողջ աշխարհը նվիրել նրանց: Քանի որ կանանց միամսյակն ավարտվում է, որոշեցինք հիմա էլ տարբեր ոլորտների կանանցից ծաղկեփունջ «հավաքել» ու նրանց կարծիքները ներկայացնել:


Արմինե Հովհաննիսյան


Ռիտա Շառոյան


Մարգարիտ Եսայան

«Օրրան» բարեգործական կազմակերպության հիմնադիր Արմինե Հովհաննիսյանը, խոսելով հայ կանանց մասին, ասում է. «Հայ կինն այսօր գտնվում է երկու քաղաքակրթությունների, ժամանակների խաչմերուկում: Մի կողմից նա սնվել եւ դաստիարակվել է հայկական ավանդական արժեքներով օրինակելի անձանց շուքի ներքո, մյուս կողմից՝ նա ապրում է պատմական մի շրջանում, երբ ժամանակի պահանջն է լինել հանրության գործունյա եւ նախաձեռնող անդամ: Հայաստանի Հանրապետության կյանքի վերջին քսան տարիներն առավել ընդգծեցին այս հասարակական պահանջը: Այնտեղ, որտեղ տղամարդիկ թերացան, կանայք անմիջապես իրենց ուսերի վրա վերցրին նաեւ այդ պարտականությունները... Ինձ համար նրանք են այսօրվա հերոսները: Կանայք կարող են դրսում ընտանիքի հացը վաստակել եւ ներսում լինել խոնարհ, սիրող մայր ու կին»:

Արդյո՞ք համատեղելի են կնոջ եւ մոր կերպարները: «Արգենտինահայ բանաստեղծուհի Ալիսա Կիրակոսյանը մի գեղեցիկ բանաստեղծություն ունի, որտեղ իր առաջնեկ դստեր ծննդյան տարեդարձը տոնում է որպես իր մայրության տոն: Իսկապես, այն վայրկյանից, երբ ծնվում է առաջնեկը, մոր համար աշխարհը կարծես գլխիվայր շուռ է գալիս, լիովին փոխվում է աշխարհայացքը: Կնոջ համար ամեն ինչից վեր եւ առաջնային է դառնում այդ նորահայտ փոքրիկ էակը, որի շուրջն է կենտրոնանում ողջ աշխարհը: Եվ այս առումով իմաստուն է այն կինը, ով կարողանում է համատեղել կնոջ եւ մոր կերպարները ու իր սերն ու ուշադրությունը հավասարապես նվիրել թե ամուսնուն, թե զավակին»,- պատասխանում է մեր զրուցակիցը: Տիկին Արմինեն ճիշտ է համարում, որ կինը լինի քաղաքականության մեջ. «Ինչպես ցանկացած ընտանիքում անփոխարինելի է կնոջ դերը, նույնպես եւ չի կարող լինել լիարժեք հասարակություն եւ քաղաքականություն՝ առանց կնոջ ակտիվ մասնակցության ու ներդրման: Ես ուրախ եմ, որ այսօր ունենք համարձակ, խելացի կանայք, ովքեր իրենց ուրույն եւ կարեւոր մասնակցությունն են ցուցաբերում մեր քաղաքական կյանքում»:

Իսկ դժվար չէ՞ լինել քաղաքական գործչի կին եւ միաժամանակ ծավալել հանրային ակտիվ գործունեություն: Ի պատասխան՝ Արմինե Հովհաննիսյանն ասում է. «Դժվար է այն առումով, որ քո անհատական դիրքորոշումը հաճախ պետք է որոշակի զիջումների ենթարկվի: Երբեմն ստիպված եմ կաշկանդված արտահայտել իմ մտքերը՝ հասկանալով, որ որեւէ հանրային հարցի շուրջ իմ տեսակետը կարող է վերագրվել ամուսնուս: Այդուհանդերձ, խոստովանեմ, որ հաճելի է, երբ Րաֆֆիի հանդեպ ունեցած մարդկանց սիրո եւ համակրանքի պտուղներից եմ օգտվում իմ գործունեության ընթացքում»:

Աժ պատգամավորության թեկնածու Մարգարիտ Եսայանն էլ հետեւյալն է ասում. «Կանանց միամսյակ, կանանց տոն, ծաղիկներ՝ կանանց, նվերներ՝ կանանց... Այս ամենը տեսել ենք, այս ամենն արդեն այնքան կանխատեսելի է եւ այնքան ծանոթ, որ անհարմար ես զգում ասել, թե որքան է հոգնեցրել: Միաժամանակ՝ երբ դրանք չեն լինում, նոր դարդուցավի մեջ ենք մեզ գցում, նեղվում ենք, նեղանում, տխրում, որ մեզ չհիշեցին, որ չշնորհավորեցին, որ մի երկու ծաղիկ չնվիրեցին: Նաեւ սա է այն հավերժական կանացի բնույթը, որը դառնում է գիր ու գրականության թեմա: Մի կորցրեք այդ ամենը»:

Շնորհավորելով բոլոր կանանց, մաղթելով առողջություն, սիրելու եւ սիրված լինելու երջանկություն՝ Մարգարիտ Եսայանը հավելում է. «Այս տարի առաջին մարտի ութն ու ապրիլի 7-ն է, որ նշում եմ առանց մորս՝ Ելենա Դարբինյանի: Ավելի ճիշտ՝ գնում եմ մորս գերեզմանին, նրա սիրած ծաղիկներն եմ տանում, մի քիչ լուռ կանգնում եմ: Լացս չի գալիս: Չորացել է: Չգիտեմ՝ ինչու է այդպես: Մորս սիրած մի բանաստեղծության տողերն եմ ուզում նվիրել մեզ բոլորիս եւ մաղթել, որ ձեր բոլորի մայրերը շատ երկար ապրեն եւ միշտ առողջ: Պահպանեք մայրերին, այդպիսով դուք ինքներդ ձեզ եք պահպանում:

- Շատ մի տխրիր, շատ մի խնդա, սիրելիս,

Այս աշխարհում եւ ոչ մի բան գին չունի:

Վաղանցուկ են, կան ու չկան սիրելիս,

Բոլոր իրերն ու աստղերը անհունի»:

Երեւանի քաղաքապետարանի «ՀայԱրտ» կենտրոնի տնօրեն Ռիտա Շառոյանի խոսքով հրաշալի է բանաձեւած, որ մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը: «Իսկապես, իդեալական մայրեր պիտի ունենանք՝ իդեալական հայրենիք ունենալու համար. չէ՞ որ ամեն մարդ արարած ծնվում է մորից եւ ձեւավորվում, զարգանում ու դաստիարակվում է մոր շնորհիվ եւ միջոցով: Թեեւ խոսքս կապված պիտի լինի կանանց տոների կամ ինչպես ասում ենք՝ «միամսյակի» հետ, սակայն չեմ կարող բացասական շեշտադրումներ չանել մերօրյա նոր հայուհիների՝ իրենց զավակներին անհայրենիք եւ կոսմոպոլիտ դաստիարակության վերաբերյալ. հարցրեք մեր փոքրիկներին՝ որ մեծանաս՝ ինչ ես դառնալու, եւ կլսեք պատասխանը. մոդել, շոուբիզնեսի աստղ, հաղորդավար, իսկ բոլորովին վերջերս ասպարեզ է եկել նոր մասնագիտություն՝ «թամադա»: Այ քեզ բան՝ կին- թամադա: Մինչդեռ հայուհին միշտ էլ իր հոգուց մի բան տեղափոխում է իր զավակների կրծքի տակ՝ պահպանելու համար ընտանիքն ու հայրենիքը: Նրա հերոսության իրական չափը մեր պատմության տարբեր ժամանակներում՝ ապացուցման կարիք չունի: Մեկ օրինակ միայն. հայ կինը մարդկության ամենադաժան արհավիրքից՝ Մեծ եղեռնից փրկեց Մշո ճառընտիրը... Արդար լինենք, հայ տղամարդն էլ երբեք չի ուրացել հայ կնոջ հերոսականությունն ու հեզությունը, նրա վեհանձնությունը, նվիրումն ու սերը գովերգել են մեծ պոետներն ու նկարիչները՝ հայրենիքի խորհրդանիշն ու կերպարը նույնացնելով մոր հետ. Մայր հայրենիք, Մայր լեզու: Այնպես որ, մեզ գենդերային հավասարությունը պետք չէ, կանանց իրավունքներն ու շահերը պաշտպանող ինչ-որ կազմակերպությունների կարիքը չունենք, կանանց տոնական միամսյակն էլ... դե լավ, ոչինչ...»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Շոու-բիզնեսում միայն փողն ու ծանոթությունը չեն»

## Կովկասցի երգիչ Ֆելիքս Ցարիկատին չի տրվել «սեռական» առաջարկների

Երեկ Ազգային օպերային թատրոնում երաժշտարվեստի համարյա բոլոր ոլորտները ներկայացնող ռուսաստանցի անվանի արտիստների նոր համերգով ազդարարվեց «Մոսկվայի օրերը Երեւանում» միջոցառումների շարքը: Այն բացվեց ռուսական հայտնի երգերի գործիքային կատարումներով, որին անմիջապես հաջորդեց ռուսաստանյան շոու-բիզնեսի ճանաչված երգիչ, ՌԴ վաստակավոր արտիստ Ֆելիքս Ցարիկատիի՝ Առնո Բաբաջանյանի հայտնի հիթերից «Երկրագնդի ամենալավ քաղաքը» երգի կատարումը:

«Առավոտը» կուլիսներում զրուցեց ճանաչված երգչի հետ: Ֆելիքս Ցարիկատին նախ հայտնեց, թե ինքը հայերի հետ համարյա համերկրացի է՝ կովկասցի, ծնունդով Նալչիկից, Հյուսիսային եւ Հարավային Օսեթիաների, Կաբարդինո-Բալկարիայի, Ինգուշեթիայի ժողովրդական արտիստ, հիանալի հայազգի ընկերներ ունի եւ նրանց հետ հանդիպման ժամանակ, երբ սեղանի շուրջ կատարում է հայկական «Դլե յամանը», պետք է ներկա լինել ու տեսնել, թե ի՜նչ է կատարվում... Իր երգացանկում բաբաջանյանական երգերի առնչությամբ էլ ասաց, թե սիրել է հայ անվանի կոմպոզիտորի ստեղծագործությունները հատկապես Մուսլիմ Մագոմաեւի անգերազանցելի մեկնաբանությամբ ու հաճախ էլ ձգտել նմանակել դրանք: Ափսոսում է, որ Բաբաջանյանի հետ ծանոթացել է կյանքի մայրամուտին:



Ֆելիքս Ցարիկատիի երկրորդ այցն է Հայաստան: Մեր զրուցակիցը 1991թ.-ն է համարում իր՝ պրոֆեսիոնալ բեմ բարձրանալու սկիզբը: Երբ ասացինք, որ իրեն հիշում ենք 80-ականների վերջին Յուրմալայում կայացած երիտասարդ կատարողների մրցույթից, Ցարիկատին ասաց. «1989-ին մասնակցել եմ այդ մրցույթին՝ չարժանանալով ոչ մի մրցանակի: Վատ էի պատրաստված, որովհետեւ նույն թվականին ավարտելով ԳԻՏԻՍ-ը, պատրաստվում էի հանդես գալ 3 դերերգով, այդ թվում՝ Ֆիգարոյի՝ Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայում, իսկ 1991-ին մասնակցելով հիշյալ մրցույթին՝ արժանացա «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին»:

Հետաքրքրությանը, թե ռուսաստանյան շոու-բիզնեսում ո՞վ է իր կնքահայրը կամ կնքամայրը, երգիչը հայտնեց. «Փառք Աստծո, ոչ մեկը չեմ ունեցել, բայց, փոխարենը, իմ առջեւ ճանապարհները բացվել են մորեղբորս՝ Խորհրդային Միությունում ճանաչված ու սիրված Ռուսաստանի սպորտսմենների կուսակցության նախագահ Օթարի Կվանտրիշվիլիի անվան շնորհիվ»: Հավելեց նաեւ, որ 1994-ին, երբ գազանաբար սպանվել է մորեղբայրը, իր առջեւ փակվել են TV-ների ու համերգասրահների դռները: Հարցադրմանը՝ ի վերջո, Կոբզոնի՞, Պուգաչովայի՞ կամ ո՞ր հեղինակությունների գլխավորած խմբավորումները բացեցին դռներն իր առջեւ, արտիստն ասաց. «Ձեր թվարկած անվանիները եւ մյուսները ինձ ճանաչում են շատ վաղուց: Ցավոք, ինչպես աշխարհի, այնպես էլ ռուսաստանյան շոու-բիզնեսում, հաճախ միայն փողն ու ծանոթությունը չէ, որ դեր են կատարում: Լինում են այլ «բնույթի» առաջարկներ եւս... Ժամանակին ինձ հետ էլ է պատահել, բայց ես կովկասցի եմ... Մի երազանք ունեմ՝ հանդես գալ բարեկամիս՝ Վալերի Գերգիեւի հետ»:

Դիտարկմանը, թե մի քանի հանրապետությունների ժողովրդական եւ ՌԴ վաստակավոր երգիչը հավանաբար ապրում է Արեւմուտքի եւ իր որոշ կոլեգաների նման աստղի կյանքով, Ֆելիքս Ցարիկատին հակադարձեց. «Առանձնատներ չունեմ ոչ մի կղզում: Մոսկվայում ունեմ 2 բնակարան, մյուս հանրապետություններում էլ՝ մեծ տներ, շատ եմ սիրում ծով, ջունգլի... սեփական «Կատրիզ» խմբի եւ «Պրեզիդենտ» շոու-բալետի հետ շրջագայությունները»:

Ընտանեկան վիճակի մասին էլ կեսկատակ-կեսլուրջ տեղեկացրեց. «Ինչպես կովկասցիների 99 տոկոսը, ես էլ ունեմ 2 ընտանիք»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Vivacell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Դերենիկ Գաբրիելյան. «Ռինգը հինգերորդ անկյուն չունի»

## Մինչդեռ՝ ԱԻԲԱ-ի կուլիսներում վեցերորդն էլ կարելի է գտնել

Տրապիզոնում կայանալիք բռնցքամարտի օլիմպիական վարկանիշային մրցաշարի օրերին՝ ապրիլի 19-ին, կայանալու է մարզաձեւի եվրոպական կոնֆեդերացիայի արտահերթ համաժողով, իսկ հաջորդ օրը՝ գործկոմի նիստ:

Դրանց մասնակցելու է նաեւ մեր պատվիրակության ղեկավար ու եվրոպական կոնֆեդերացիայի գործկոմի անդամ Դերենիկ Գաբրիելյանը: «Առավոտը» ՀԲՖ 1-ին փոխնախագահից տեղեկացավ, որ ինչ հարցեր են քննարկվելու դրանցում:

- Պարոն Գաբրիելյան: Արտահերթ համաժողովի եւ գործկոմի օրակարգերին տեղյա՞կ եք:

- Այո: Մեկում քննարկվելու են ներկայացվող նոր օրենքները, մյուսում՝ 2012 թվականի ծրագրերը, մրցաշարերը, կանոնները, մրցավարության հետ կապված աշխատանքներն ու կանոնները:

- Ընդհանուր գծերով դրանք կներկայացնե՞ք:

- ԱԻԲԱ-ն ցանկանում է, որպեսզի Տրապիզոնում աշխատեն տարբեր մայրցամաքների մրցավարներ, որոնք միմյանց հետ այնպիսի կապեր չունեն, ինչպես նույն տարածաշրջանի ներկայացուցիչները: Դա դիտարկվում է որպես առաջադիմական քայլ՝ ենթադրելով, որ այդ դեպքում բոլորի հետ կոնտակտ հաստատելը դժվար կլինի:

- Բայց ցանկալի ելքի համար, ենթադրում եմ, կոնտակտի մեջ են մտնում ոչ թե մրցավարների, այլ նրանց նշանակողների հետ: Եվ եթե միջազգային ֆեդերացիան մտքին դնի, իրեն հարկավոր մարտի ստասարկումը կտա իր մրցավարներին՝ համապատասխան հրահանգներով:



- Համաձայն եմ, չի բացառվում: Շատ երկրների ֆեդերացիաներ, այդ թվում նաեւ մենք, հասկանում ենք, որ դա անարդարությունների դեմ պայքարի այնքան էլ արդյունավետ միջոց չէ: Դրա համար մեզանից էլ պահանջվելու է Տրապիզոնում լինել առավել քան միասնական, որպեսզի ցանկացած մենամարտում, անկախ, թե տուժող բռնցքամարտիկը որ երկրից է, կարողանանք մինչեւ վերջ պայքարել արդար որոշման հասնելու համար: Ես, օրինակ, արդեն պայմանավորվել եմ ԱՊՀ ու եվրոպական մի քանի երկրների իմ գործընկերների հետ: Մնում է, որ տեղում էլ հաստատական լինենք:

- Նշեցիք նաեւ մրցաշարերի անցկացման հետ կապված խնդիրները: Հետաքրքիր է, ի՞նչ սկզբունքներով են ընտրվում երկրները: Այն, ինչ կատարվում է վերջին տարիներին ԱԻԲԱ-ում ու ՖԻԼԱ-ում, խիստ կասկած է առաջացնում, թե այդ ընտրությունները կատարվում են անշահախնդիր: Մասնավորապես, բռնցքամարտի աշխարհի առաջնությունը, որտեղ խաղարկվում էր ուղեգրերի առյուծի բաժինը, տրվեց Ադրբեջանին: Իսկ հիմա էլ միակ վարկանիշային մրցաշարը նշանակված է Թուրքիայում...

- Հարցը լուրջ է ու տեղին: Աշխարհի առաջնությունն անցած փուլ է, ու հիմա դրան եկեք չանդրադառնանք: Ինչ վերաբերում է այս վարկանիշային մրցաշարին, այն նախապես պետք է կայանար Ստամբուլում: Հետո, երբ պարզվեց, որ այնտեղ անցկացնելը չի ստացվում, մենք պայքարեցինք, որպեսզի այն բերենք Երեւան: Եվրոպական մի քանի երկրներ, Ռուսաստանն ու Ուկրաինան էլ էին դա ցանկանում, բայց արի ու տես, որ ԱԻԲԱ-ն որոշեց այն թողնել Թուրքիայում:

- Ու այսքանից հետո հավատա՞նք ԱԻԲԱ-ի ազնվությանը:

- Անկախ ամեն ինչից, պետք է պայքարենք մեր իրավունքների համար: Ու կրկնում եմ, դա հնարավոր է միայն միասնականության եւ օրենքներն ու կանոնադրությունը լավ իմանալու շնորհիվ: Բացի դա, մենք, անձամբ ես՝ որպես Հայաստանի պատվիրակության ղեկավար ու եվրոպական կոնֆեդերացիայի գործկոմի անդամ, խիստ հրահանգ ունեմ ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանից՝ Տրապիզոնում տեր կանգնել մեր հաղթանակներին: Բայց այստեղ խոսքը հնարավոր կողմնակալ մրցավարության մասին է: Շատ բան կախված է լինելու մեր տղաներից: Մենք նրանց բացատրում ենք, որ ռինգը հինգերորդ անկյուն չունի: Այսինքն՝ մոռացիր ամեն ինչ, դու ես ու մրցակիցդ: Մտե՞լ ես ռինգ՝ համարիր, որ դա քո շանսն է, եզրափակիչը, ու արա հնարավորություններիդ առավելագույնը:

- Իսկ քննարկվելիք նոր օրենքների մասի՞ն ինչ կասեք:

- ԱԻԲԱ-ն վերջին տարիներին փորձում է հասնել այն բանին, որ բոլոր մայրցամաքների կոնֆեդերացիաները ենթարկվեն իրեն: Ու, կարծես, որոշակի հաջողությունների հասնում է: Գործկոմի նիստում պիտի պայքարենք դրա դեմ՝ հանուն կոնֆեդերացիաների իրավունքների: Մասնավորապես, Եվրոպան, որ համաշխարհային բռնցքամարտի լիդերն է, մարզաձեւի հետ կապված ամեն մի հարցում իր ծանրակշիռ խոսքը պետք է ունենա:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# Կնոջ մարմինը կրում է իր բոլոր տղամարդկանց հոգեւոր մատրիցաները

## Այս կարծիքին է սեքսապաթոլոգը

Հայտնի է, որ մինչեւ առաջին ակտը կնոջ սեռական համակարգը պաշտպանված է հատուկ գոյացությամբ՝ կուսաթաղանթով, որը արգելում է օտար առարկաների, նյութերի ներթափանցումը կնոջ օրգանիզմ: Այդ թաղանթը խախտվում է ընդամենը մեկ անգամ եւ բնական ճանապարհով ու այլեւս չի վերականգնվում, «Առավոտի» հետ զրույցում ասում է բժիշկ-սեքսապաթոլոգ Վրեժ Շահրամանյանը, պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ բնության մեջ նման «հարմարություն» ունի միայն կինը: «Հարսնացուի՝ կույս լինելու պարտադիր պայմանը, որ հազարամյակներ շարունակ ավանդաբար պահպանվել է մեր երկրում ինչպես հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական շրջանում, միշտ ունեցել է իր հոգեւոր բացատրությունը:

Բայց դա ունի նաեւ կենսաբանական հիմնավորում. մեր նախնիներին հայտնի էր այն, ինչը գիտությունը հայտնաբերեց 19-20-րդ դարերում: Այն է՝ բավականին մեծ հավանականությամբ կնոջ բոլոր զավակները նմանվում են նրա առաջին սեռական զուգընկերոջը: 19-րդ դարում դա հայտնաբերվեց, սկզբում կենդանական աշխարհում, այնուհետեւ հաստատվեց, որ նույն երեւույթը գործում է եւ մարդկանց պարագայում: Երեւույթը կոչվեց «տելեգոնիա» (tele-հեռավոր, goni-ծնունդ)՝ ի պատիվ Ոդիսեւսի ապօրինածին զավակ Տելեգոնի, որը չճանաչելով հորը՝ սպանել էր նրան»,- նշում է բժիշկը՝ շարունակելով, որ 1815 թվականին հայտնի բնագետ, էվոլյուցիայի տեսության հիմնադիր Չարլզ Դարվինի ընկերը՝ լորդ Մորտոնը, փորձեց իր զտարյուն էգ ձիուն խաչասերել զեբրի հետ: Դրանից ոչինչ չստացվեց, ձին սերունդ չտվեց: Սակայն երկու տարի անց արդեն զտարյուն որձ ձիուց այն լույս աշխարհ բերեց գունավորումով զեբրին նման քուռակ: Այդ երեւույթը լորդ Մորտոնն անվանեց տելեգոնիա՝ նկատի ունենալով եւ Ոդիսեւսի ապօրինածին հայրասպան զավակի առասպելը, եւ գենետիկ հատկությունները տարածության մեջ փոխանցելու իմաստը հունարեն լեզվում:

«19-րդ դարի երկրորդ կեսին հետազոտությունները շարունակեցին Ֆլինտը եւ Լե-Դանտեկը, ու պարզ դարձավ, որ տելեգոնիայի երեւույթը մարդկանց պարագայում նույնպես գործում է: Եվ ոչ պակաս ուժգնությամբ, քան կենդանական աշխարհում: Օրինակ՝ ԱՄՆ-ում քիչ չեն դեպքերը, որ սպիտակամորթ ամուսիններից սեւամորթ երեխա ծնվի: Սակայն Ռոբերտ եւ Դորոթի Լեսթերների դեպքը դարձել էր իսկական սենսացիա եւ հայտնվել մամուլի առաջին էջերում, քանի որ դատարան էին ներկայացրել հակընդդեմ հայցեր: Ռոբերտը պահանջում էր ապահարզան՝ կնոջ դավաճանության համար, իսկ Դորոթին պահանջում էր բարոյական վնասի գումարային մեծ փոխհատուցում՝ անհիմն եւ վիրավորական մեղադրանքների համար: Դատարանը, որպես փորձագետ ներգրավելով լավագույն մասնագետների, այդ թվում եւ տելեգոնիայի տեսության գիտակների, պարզեց, որ մինչեւ ամուսնությունը նա ունեցել է նեգր սիրեկան, սակայն ամուսնանալուց հետո հավատարիմ էր ամուսնուն, եւ երեխան հենց իր ամուսնու գեների կրողն է»,- բացատրում է բժիշկը՝ նշելով, որ տելեգոնիա երեւույթը հետազոտվել է ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Եվրոպայում, սակայն 1960-ականների կեսերին հատկապես Արեւմուտքում դադարեցվում է արդյունքների հրապարակումը. դրանք դարձան գաղտնի: Ըստ Վ. Շահրամանյանի՝ գաղտնիության ռեժիմը թերեւս կարելի է մասամբ բացատրել արհեստականորեն ծավալված սեքսուալ հեղափոխություններով եւ պոռնոարդյունաբերության հաղթարշավով, որոնց բուն նպատակն էր ավանդական հասարակություններում քայքայել տոհմի եւ ընտանիքի ինստիտուտները: «Ֆունդամենտալ հայտնագործություն արել էր ռուս գիտնական, կենսաբանական գիտությունների դոկտոր Պյոտր Գարյաեւը 1985 թվականին: Նա զբաղվում էր ժառանգականությունը կրող նյութի՝ ԴՆԹ-ի




հետազոտություններով լազերային սպեկտրոսկոպի միջոցով, եւ պատահականորեն մի օր ԴՆԹ-ի պատրաստուկով սրվակը սպեկտրոսկոպից հանելուց հետո այդտեղ դրել էր դատարկ սրվակ: Ու հայտնաբերել, որ սարքը ցուցադրում է նույն ԴՆԹ-ի սպեկտրը, բայց ավելի թույլ: Չհավատալով իր աչքերին՝ նա բծախնդրորեն մաքրեց եւ սրվակը, եւ սպեկտրոսկոպը, սակայն նույն սպեկտրը պահպանվեց, ու աստիճանաբար մարելով՝ սպեկտրը երեւում էր 40 օր շարունակ: Այսինքն՝ ԴՆԹ-ն նյութապես չկար, սակայն դրա աննյութ, ալիքային կամ կենսադաշտային «ֆանտոմը» մնացել էր: Աթեիստական, զուտ նյութապաշտական տեսանկյունից այդպիսի բան չի կարող լինել երբեք, սակայն ստացվում է, որ ԴՆԹ-ն կրում է մարդու ոչ միայն նյութական, այլեւ հոգու մատրիցան: Ու, ըստ տելեգոնիայի տեսության, կնոջ մարմինը կրում է իր բոլոր տղամարդկանց հոգեւոր մատրիցաները, որոնք հետո մասնակցում են նրա զավակների նյութեղեն եւ հոգեւոր կերպարի ձեւավորմանը: Տղամարդու սերմնաբջիջը կնոջ օրգանիզմում ապրում է առավելագույնս մի քանի օր, սակայն հոգեւոր կենսաէներգետիկ պատկերը կարող է պահպանվել մինչեւ մահ եւ ձեւավորել զավակների կերպարը նախորդ տղամարդկանց նմանությամբ: Իսկ եթե զուգընկերները շատ են եղել, ապա ամեն մի բեղմնավորման ժամանակ սկսվում է այդ մատրիցաների պայքարը, եւ հաղթում է ուժեղագույնը: Այսինքն՝ եթե կինը մինչեւ ամուսնությունն ունեցել է սեռական հարաբերություններ (այդ թվում՝ այնպիսի տեսակների, որոնք չեն հանգեցնում կուսաթաղանթի պատռմանը), նրա ամուսինը կարող է խաչ քաշել մաքուր, տոհմիկ, զտարյուն զավակներ ունենալու հույսի վրա»,- բացատրում է բժիշկը՝ հավելելով, որ ավելորդ չէ դիտարկել նաեւ հետեւյալ հարցը. իսկ բնության մեջ ի՞նչ դեր է խաղում տելեգոնիան: Վ. Շահրամանյանի ձեւակերպմամբ՝ «տեսակների փոփոխության հիմնական մեխանիզմը բնությունում ԴՆԹ-ում առկա գենետիկ կոդի փոփոխություններն են՝ մուտացիաները տարբեր վնասող գործոնների ազդեցության տակ: Մուտանտների մեծ մասը չեն ապրում, եւ միայն չնչին մասն է պատահականորեն ստանում նոր, օգտակար որակներ: Իսկ տելեգոնիան կենդանիների համար ստեղծում է փոփոխման լրացուցիչ, ավելի արագագործ մեխանիզմ: Կենդանու էգը, զուգավորվելով բազում որձերի հետ, փաստորեն ստանում է հնարավորություն լույս աշխարհ բերելու այնպիսի սերունդ, որը նմանվում է ուժեղագույն կենսադաշտային մատրիցա ունեցող որձին: Կենդանական աշխարհում բազմազան զուգավորումները գոյապայքարի լրացուցիչ միջոց են, որ օգնում են հարմարվել փոփոխվող միջավայրին:

Բայց մարդը կենդանուց տարբերվում է ոչ միայն բանականության առկայությամբ, այլեւ նրանով, որ կարիք չունի լույս աշխարհ բերել ինչպես մարմնական, այնպես էլ հոգեւոր մուտանտների: Դա առավել եւս վերաբերում է հայերի պես հնագույն ազգին: Եվ մեր ավանդական բարոյականությունը մեր արյան եւ ոգու անաղարտության, մեր մարմնի ու հոգու առողջության եւ զորության լավագույն պահպանն է»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ